



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարզևների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Առողջապահության զարգացման գործում ներդրած ավանդի համար և Բուժաշխատողի օրվա կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարզևներով պարգևատրել.

### «Վաչագան Բարեպաշտ» մեդալով՝

Սերգեյ Զավենի Մովսեսյանին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վիրաբուժական բաժանմունքի վարիչ

### «Երախտագիտություն» մեդալով՝

Վարդան Նիկողայի Թադևոսյանին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Բ.Բոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2015 թ. հունիսի 19  
Ստեփանակերտ  
ՆՀ-60-Ա



*[Handwritten signature]*

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

19.06.2016թ.